

ԶԱՅՐՈՒՅԹ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ

Երևանի կաշվի գործարանի ակումբի ընդարձակ դահլիճում ժողովի էին հավաքվել բանվորները, ինժեներատեխնիկական աշխատողները և ծառայողները: Գործարանի գիրեկտոր Ա. Ալեքսանյանը հավաքվածներին ծանոթացրեց սովետական ժողովրդի ոխերիմ թշնամի, Հայրենիքի դավաճան Բերիայի և մյուս ստոր դավադիրների գործը ՍՍՌՄ Գերագույն դատարանի հատուկ դատական ատյանի քննությանը հանձնելու մասին ՍՍՌՄ Դատախազության հաղորդագրությանը: Գործարանի աշխատողներն իրենց ելույթներում անսահման գոհունակություն են հայտնում կոմունիստական պարտիային ու Սովետական կառավարությանը, որ նրանք ժամանակին հայտնաբերեցին թշնամիներին, կասեցնելով նրանց քայքայիչ գործողությունները:

— Բերիան և նրա մեղսակիցները, — ասաց իր ելույթում պատրաստական ցեխի առաջավոր բանվոր Բ. Չախարյանը, — միջազգային իմպերիալիզմի գործակալներն են: Նրանք ցանկանում էին ոչնչացնել այն ամենը, ինչ ձեռք է բերվել բանվոր դասակարգի և սովետական ժողովրդի քրտնաջան աշխատանքով: Այդ ճիվաղները դավադրություն էին նախապատրաստում մեր երկրում կապիտալիզմը վերականգնելու համար: Բայց նրանց շահողվեց հասնել իրենց սև նպատակին: Պարտիան և Սովետական կառավարությունը մերկացրին դավաճաններին: Ներքանի ցեխի վարպետ Խ. Ասատրրյանը իր ելույթում անարգանքի սյուժեին գամեց դավաճաններին: — Իմպերիալիզմի ծախու գործակալները, — ասաց նա, — նպատակ էին դրել խարխուլ սովետական ժողովրդի եղբայրական միասնությունը, ձրգ-

տում էին թշնամություն սերմանել անդրկովկասյան ժողովուրդների միջև՝ նրանց դարավոր բարեկամությունը քայքայելու համար: Ի պատասխան թշնամու ստոր արարքների, մենք կաշխատենք կրկնապատկված եռանդով, է՛լ ավելի կհամախմբվենք մեր հարազատ պարտիայի և կառավարության շուրջը: Կաշեգործների կոլեկտիվը, որը տարեկան առաջադրանքը կատարել է ժամկետից 18 օր շուտ, պարտավորվեց մինչև տարվա վերջը երկրին տալ մեծ քանակությամբ արտասլանային արտադրանք: Ժողովի մասնակիցներն ընդունեցին բանաձև, որի մեջ արտահայտելով իրենց զայրույթը սովետական ժողովրդի ոխերիմ թշնամիների նկատմամբ, պահանջեցին Բերիային և նրա ոհմակին տալ արժանի պատիժ՝ զրնդակահարություն:

ՍԵՐՏ ՀԱՄԵԽՄԲՎ ԸՇՈՒԹՅԱՄԲ

Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի ուսանողներն ու դասախոսները, լսելով ՍՍՌՄ Դատախազության հաղորդումը Հայրենիքի դավաճան Բերիայի և նրա գործակիցների գործի քննության արդյունքների մասին, իրենց զայրույթն ու ցասումն արտահայտեցին միջազգային իմպերիալիզմի գործակալ, կարիերիստ և ավանտյուրիստ Բերիայի և նրա գործակիցների հակառևոլյուցիոն,

հակապետական ու հակապարտիական գործողությունների դեմ: Պրոֆեսոր Մ. Մանթրոսյանն իր ելույթում ասաց. — Մեր ժողովուրդը ցնծությամբ դիմավորեց այդ ստոր դավաճանների մերկացումը և, է՛լ ավելի համախմբվելով ՍՍԿՊ Կենտկոմի ու Սովետական կառավարության շուրջը, ոչ ոքի թույլ չի տա պառակտելու ՍՍՌՄ ժողովուրդների անխախտ բարեկամությունը:

Հայրենիքի ստոր դավաճան Բերիայի և մյուս դավադիրների մասին անհուն զայրույթով խոսեց ֆիլոլոգիական ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանող Վ. Պետրոսյանը: Դոցենտ Թ. Կարապետյանը, բիոլոգիական ֆակուլտետի ուսանողուհի է. Զիլհակոբյանը նշեցին, որ ոչ մի դավաճանի չի հաջողվի խախտել սովետական ժողովուրդների բարեկամությունը, նրանց սերտ համախմբվածությունը ուս մեծ ժողովրդի շուրջը: